ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Պետական Հատվածի Արդիականացման Երկրորդ Ծրագիր
Վարկ No. 7854-AM

Առաջադրանքի անվանումը՝ **Էլ-ծառայությունների փոխգործելիության շրջանակ և քաղաքականության ձևավորման վերլուծություն**

Հղում No. (համաձայն Գնումների Պլանի): PSMP2- C- 3.1.3.1

Հայաստանի Հանրապետությունը միջոցներ է ստացել Համաշխարհային *բանկից* "**Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագրի** ֆինանսավորման համար, նպատակ ունի օգտագործել այս միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների համար:

Էլ-կառավարության նախաձեռնության իրականացման նպատակով Հայաստանը որդեգրել է ապակենտրոնացված մոդել, ըստ որի օգտվողներին էլեկտրոնային ծառայություններ մատուցելու համար պատասխանատու են անհատական պետական մարմինները: Սակայն, ջանքերի և ծախսերի կրկնությունից խուսափելու և էլ-ծառայությունների իրականացումը հնարավոր դարձնելու և արագացնելու նպատակով, ինչպես նաև ապահովելու համար պետական մարմինների անհրաժեշտ ինտեգրումը, էլ-կառավարության որոշ տարրեր կբաշխվեն և կիրականացվեն կենտրոնացված եղանակով: Համակառույցի բաշխված մասը կազմված կլինի ինտեգրման ենթակառուցվածքից (ինտեգրման դող, օգտվողների փոխազդեցության գործիքների հավաքածու, անվտանգության ուղեմուտ և վճարումների ուղեմուտ), էլ-կառավարման պորտալ:

Խորհրդատուի ծառայությունների նպատակ կհանդիսանա պատասխանատվության ստանձնումը էլ-ծառայությունների փոխգործելիության շրջանակի մշակման և էլ-ծառայությունների ինտեգրման ենթակառուցվածքի համար պահանջների մշակման հետ կապված բոլոր հարցերի համար: Սույն ծրագիրը կաջակցի Կառավարության ապարատին ստանդարտների մշակման, ինչպես նաև պետական հաստատությունների համար էլ-ծառայությունների մշակման համար քաղաքականության ձևավորման, խորհրդատվության, հաղորդակցության և ընդունման համար գործընթացների մոդելավորման գործում, ինչը հետագայում կինտեգրվի նախարարական բիզնես գործընթացներում: Ծրագիրը նաև կաջակցի կառավարությանը պետական բոլոր հաստատություններում էլ-ծառայությունների վերաբերյալ քաղաքականության ձևավորման համար պահանջվող համապատասխան ուղեցույցներ, մեթոդներ և այլ գործիքների հավաքածուներ ներդնելու հարցում: Այդ ամենից բխող նպատակ է հանդիսանում այն, որ այս գործողությունների պլանները ձևակերպվեն այնպես, որ հնարավոր լինի չափել համապատասխանությունը և իրականացումը; կառավարուոյան կողմից, այլ նախարարությունների և մարմինների կողմից, որոնք

կիամագործակցեն ընդհանուր նպատակներին հասնելու համար և հանրության կողմից՝ կառավարությունից իրենց ունեցած սպասելիքների տեսանկյունից:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածը կազմում է մոտավորապես 4 ամիս:

ՀՀ կառավարության աշխատակազմը և Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնը (ԱՖԾԿԿ) հրավիրում են խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կհաստատեն, որ նրանք ունեն Ծառայություններն իրականացնելու համար պահանջվող որակավորումը և համապատասխան փորձառությունը:

Ընտրության չափանիշներն են.

- Առնվազն 7 տարվա ապացուցելի փորձ ազգային, տեղական և կազմակերպական մակարդակներում ՏՀՏ ծրագրերի մշակման, իրականացման և ղեկավարման ոլորտում;
- Համապարփակ գիտելիքներ պետական հատվածի էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման և փոխգործելիության վերաբերյալ;
- Ապացուցելի աշխատանքային փորձ էլ-կառավարման մարտավարության հետ կապված քաղաքականության մշակման գործընթացների ոլորտում;
- Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ինչպես նաև ԵՄ երկրների անցումային տնտեսությունների հետ կապված փորձը առավելություն կհամարվի:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման Ուղեցույցների» (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) («Խորհրդատուի ուղեցույց») 1.9 պարագրաֆին, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:

Իրենց որակավորումը բարձրացնելու համար Խորհրդատուները կարող են համագործակցել այլ ընկերությունների հետ՝ համատեղ կամ ենթախորհրդատվությամբ:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի «Ուղեցույցներ. ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձում» փաստաթղթում (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) հատկորոշված Մաս II -ի՝ Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության (ՈԱՀԸ) ընթացակարգերի համաձայն:
Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով հետևյալ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչ 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է գրավոր ձևով ներկայացվեն ներքոնշյալ հասցեով (անձամբ, փոստով, ֆաքսով կամ էլ-հասցեով) մինչև 2014թ. հուլիսի 22-ը, ժ. 18:00 (տեղական ժամանակով):

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն
ՀՀ ֆինանսների նախարարություն
սենյակ N 344, Կառավարության տուն 1, Հանրապետության հրապարակ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (374-10) 52 34 71 ; (374-60) 700 388
Ֆաքս՝ (374-10) 54 57 08
Էլ-փոստ՝ info@ffpmc.am